

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1975 թվականին Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում գումարված համաժողովից ութ տարի հետո, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ 300 Եկեղեցիներ ներկայացնող մոտ երեք հազար պատգամավորներ, դիտորդներ, լիազորված այցելուներ և պաշտոնական անձնավորություններ ժողով գումարեցին Կանադայի Վանկուվեր քաղաքում: Համաժողովը, որը տեղի ունեցավ տեղի Բրիտանական Կոլոմբիա համալսարանի մասնաշենքում, տևեց լրիվ տասնութ օր՝ սույն թվականի հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 10-ը:

Համաժողովին, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, իր մասնակցությունը բերելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն նշանակել էր Մայր Աթոռի մի պատվիրակություն հետևյալ կազմով. Տ. Թորգոմ արք. Մանուկյան, Տ. Շահե արք. Աճեմյան, Տ. Վաչե արք. Հովսեփյան, Տ. Ներսես եպս. Պոլատյան, Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյան, Տ. Եղնիկ քհն. Պետրոսյան, Տիկին Լուիզ Սիմոնյան և Տիկին Լուիզ Գալեմքերյան:

Համաժողովն զբաղվեց անցնող ութ տարիների ընթացքում կատարված աշխատանքի գնահատումով և հաջորդող տարիների ծրագրերի մշակումով՝ կարկ տալու համար Եկեղեցիների համագործակցության և միության ջանքերին:

Համաժողովի նշանաբանն էր. «Հիսուս Քրիստոս՝ կյանքն աշխարհի»:

Քրիստոնյա Եկեղեցիների համաշխարհային սույն վեցերորդ համագումարի բացումը կատարեց ԵՀԽ-ի նախագահ Էդուարդ արքեպիսկոպոս Սքոթը ընդարձակ մի ճառով: 1948 թվականից ի վեր, առաջին անգամ լինելով, համագումարը իր նախագահի բերանից լսեց հետևյալ հարցադրումը. «Հավատարիմ գտնվեցի՞նք արդյոք Ամստերդամի համաժողովի (1948 թ.) բանաձևած պատգամին»: Ապա ԵՀԽ-ի նախագահը վերոհիշյալ պատգամից մեջբերեց հետևյալ հատվածը.

«Պետք է խնդրել Աստծուն, որ մեզ ներշնչի այսն և ոչը, որը մենք պետք է միասին ասենք ճշմարտորեն. ոչ՝ Քրիստոսի սիրո ամեն ժխտումի, ամեն դրության, ամեն ծրագրի, ամեն մարդու, որ մարդ-արարածի հետ վերաբերվում է իբրև անպատասխանատու մի առարկայի կամ շահի աղբյուրի. ոչ՝ բոլոր նրանց, ովքեր պաշտպանում են անարդարությունը հանուն կարգապահության. ոչ՝ բոլոր նրանց, ովքեր պատերազմների սերմնացաններ են՝ անխուսափելի հայտարարելով այն.—այո՝ Քրիստոսի սիրույն տրված ամեն պատասխանի. այո՝ նրանց, ովքեր փնտրում են արդարությունը և ապահովում խաղաղությունը. այո՝ նրանց, ովքեր ապրում են հույսով, ճգնում և տառապում են մարդու դատի պաշտպանության համար. այո՝ որևէ մեկին, որը ցանկանում է, նույնիսկ առանց գիտե-

նպատ. նոր հրճիռքների և սի նոր երկրի, որտեղ բնակվելու է արդարությունը»:

Իր բացման ճառում համաժողովի նախագահը ողջունեցեն թվարկեց կատարված աշխատանքի գլխավոր հանգրվաններն ու Հեռք բերված արդյունքները «այո»-ների ուղղությամբ:

Սրբոց արքեպիսկոպոսը ԵՀԽ-ի աշխատանքները բաժանեց չորս դասակարգումների, որոնց նպատակն է բանաձևել՝

1. «Սուրբ Երրորդության մեր հավատքի արտահայտությունն ու հաղորդումը.

2. Հետապնդումը արդար և բաղձալի մի հասարակության՝ հիմնված մասնակցության վրա.

3. Եկեղեցիների միությունը և նրա կապը մարդկային միության հետ.

4. Դատապարտություն և վերանորոգում՝ իրական մի համայնքի որոնման ճանապարհի վրա»:

ԵՀԽ-ի նախագահը հիշեց վերոհիշյալ չորս ուղղություններով կազմակերպված միջեկեղեցական և միջազգային ժողովներն ու խորհրդակցությունները, որոնց նպատակն էր նեղել մեկտեղել Եկեղեցիների մտածումը՝ այսօրվա մարդկությանը հուզող մեծ հարցերին տալու համար Քրիստոսի Ավետարանի պատգամին հավատարիմ մի պատասխան: «Նայրոբիի համագումարից ի վեր,—նշեց նա,— աշխարհի բոլոր մասերից Էկումենիկ ընտանիքի անդամներին հանախմբելու նպատակով ավելի մեծ թվով հավաքույթներ կազմակերպվեցին, քան ԵՀԽ-ի ամբողջ պատմության ընթացքում նախապես՝ 1948 թվականից մինչև 1975 թվականը»: Այդ հավաքույթներն ու խորհրդակցությունները նպաստել են անդամ Եկեղեցիների մոտ ստեղծելու «Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գործունեության նկատմամբ վստահության ավելի մեծ զգացում»:

Ըստ նախագահի, անդամ Եկեղեցիների և Խորհրդի միջև ծագած դժվարությունները հետևանք են եղել հաղորդակցության դժվարությունների: Այդ իսկ պատճառով, նշեց նա, ԵՀԽ-ն ջանալու է ստեղծել հաղորդակցության լայն միջոցներ «հավատալիորեն խոսակցելու նպատակով»:

Իր ճառի ավարտին Սրբոց արքեպիսկոպոսը ներկայացրեց իր անձնական վերլուծականը այսօրվա աշխարհի դրության մասին՝ այն բաղդատելով վաթսունական թվականների կացության հետ:

Նախագահի արքեպիսկոպոսի ճառը տիրական շեշտը եղավ ամբողջ համագումարի:

Հաջորդ առավոտյան, երկու տարբեր աշխարհներից և աստվածաբանություններից եկած մտածողներ, երկու տարբեր մոտեցումներով, ներկայացրին համաժողովի նշանաբանը՝ «Հիսուս Քրիստոս՝ կյանքն աշխարհի»: Առաջին զեկուցողն էր աստվածաբանության պրոֆեսոր Թեոդոր Ստիլիանոպուլոսը՝ հույն օրթոդոքս Եկեղեցուց, որը ընդարձակ մի վերլուծականով ներկայացրեց անցյալի և այսօրվա իրացումը Աստուծո մարդացման մասին, իբրև աստվածային սիրո գերագույն արտահայտություն: «Քրիստոս չի բավականանում ուսուցանելով, թե ի՞նչ են կյանքը, լույսը և ճշմարտությունը,—նշեց նա,— ոչ էլ դրանք փոխանցելով մեզ. նա կյանքը, լույսը և ճշմարտությունն իսկ է»: Աստվածաբան պրոֆեսորը բանաձևեց հետևյալ հարցադրումը, որը համաժողովի հիմնական մտահոգությունը պիտի լիներ. «Ինչպե՞ս է, որ բացարձակ այս հայտարարությունը, թե Քրիստոս ոչ թե մի կյանք է, այլ կյանքն իսկ է, կարող է ճշգրտորեն հասկացվել կրոնական և դաղափարական այլազանությամբ հատկանշվող այսօրվա մեր աշխարհի մեջ. ա՛յս աշխարհի մեջ, որն այնքան է նեղացել, որ մի արբանյակ մի քանի ժամվա ընթացքում կարող է նրա շրջանը կատարել: Մեր դժվարությունը կայանում է հաստատելու մեջ մի քրիստոնեականություն, որը ոչ «ի վերուստ» է, ոչ էլ «ի ներքուստ», այլ՝ երկուսից էլ միասնաբար. ա՛յս է սուրբ Հովհաննեսի վկայությունը: Անտարակույս սա գիտական կամ աստվածաբանական մի հաստատում չէ, այլ՝ խոստովանություն և կենտրոնական դավանությունը քրիստոնեական մեր հավատքի»:

Հունական մտածողության մանվածապատ այս բանաձևումներին հակադրվեցին աֆրիկյան երկրների ճակատագրով մտահոգված Երկրորդ զեկուցողի՝ Երրորդ աշխարհի ներկայացուցիչ Այան Բուսաքի փոթորկաշունչ խոսքերը. «Հիսուս Քրիստոս՝ կյանքն աշխարհի»: Ի՞նչ են նշանակում այս խոսքերը տառապանքի, ճնշումի և մահվան անորոշ մեր աշխարհում»: Սուր նախադասություններով և հատու բառերով, որոնք բազում անգամներ արժանանում էին համաժողովի մասնակիցների բուռն ծափերին, զեկուցողը նկարագրեց իր աշխարհը, որտեղ տիրում են «բիրտ ուժը, ընչաքաղցությունը, մարդկային արժեքների սադոմական խեղաթյուրումը ... շահագործումը .... տնտեսական անարդարությունը ... որտեղ անհավասարությունը սրբագործված է օրենքով և ցեղային գերակայությունը՝ աստվածաբանությամբ»: «Բազմաթիվ երկրներում բազմաթիվ մանուկներ են մեռնում քաղցից, և մեծ թվով անհատներ ոչնչանում են պարզապես նրա համար, որ պաշտպան են կանգնում արդարության և մարդկային իրավունքների: Շատ

մարդիկ կոհ են գնում պատերազմի, շատեր խոշտանգվում են մահվան նախասենյակների մեջ...»: Նման կացությունների մեջ Քրիստոսի Եկեղեցին պետք է դիրքորոշվի, «ոչ որովհետև նա քաղաքական իշխանություն ունի և ոչ էլ որովհետև նա **տեր է** կացության ... Եկեղեցին տկար է և անպաշտպան... սակայն նա դիրք է բռնում, որովհետև մերժում է հավատալ, որ ճնշումի, մահվան և բնաջնջումի ուժերին է պատկանում վերջին խոսքը... Այս հավատքը դեպի կենդանի Աստված, մերժումը՝ խոնարհվելու մահվան չաստվածների դիմաց, Եկեղեցու ուժն է հանդիսանում»:

«Հիսուս Քրիստոս կյանքն է **աշխարհի:** Նա չի մտահոգված միայն Եկեղեցիով, այլ՝ **աշխարհով»:**

Այնուհետև հոետորը իր զեկուցման մեջ աշխարհի մեծագույն հարցը համարեց խաղաղության հարցը: «Ես համոզված եմ,—նշեց նա,—որ այսօր մեր առջև դրված խաղաղության հարցը Ավետարանի սրտի կենտրոնն է հանդիսանում: Սակայն խաղաղություն ասելով պետք չէ հասկանալ միայն կենքերի ոչնչացման և արգելման մի արշավ, որտեղ տիրող բառերն են՝ «միջուկային ուժ»: Իմ գյուղի մարդիկ չեն կարող հասկանալ **միջուկային** բառը, երբ **քաղց** և **աղքատություն** բառերը ոչ մի գաղտնիք չունեն նրանց համար»:

Զեկուցողը խաղաղության իր բանաձևումի մեջ ասաց. «Խաղաղությունը պատերազմի բացակայությունը չէ, այլ՝ արդարության գործուն ներկայությունը: Այն կապված է մարդ էակի ծաղկումի, ապատագրության, ամբողջականացումի հետ՝ ոչ թե անհատի, այլ ամբողջ համայնքի կյանքի և բարօրության իմաստով»:

Նա գրավիչ մի կոչով եզրափակեց իր խոսքը՝ հրավեր կարդալով ասպես. «Որեմն օգտագործենք այս երկու շաբաթները երազելու, մարգարեանալու համար, օգտագործենք այս երկու շաբաթները սիրո, խաղաղության և արդարության տեսիլքներ ունենալու, օգտագործենք այս երկու շաբաթները խոնարհաբար, բայց ուրախությամբ և քաջությամբ պնդելու համար, որ Հիսուս Քրիստոս կյանքն է աշխարհի»:

Նույն օրը ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերը համագումար ժողովին ներկայացրեց իր տեղեկագիրը, որը սովորական մի հաշվետվություն չէր ԵՀԽ-ի տարբեր բաժանմունքների կողմից կատարված աշխատանքների, իրագործված ծրագրերի կամ ապագա գործունեության վերաբերյալ: Գլխավոր քարտուղարը, իր հասկացողության վրա հիմնված մի տեսությամբ, գնահատելանը տվեց Եկեղեցիների արդի վիճակի, նրանց գործունեության դաշտի, մանավանդ դեպի էկումենիկ շարժումը ունեցած նրանց մոտեցման՝ տալով միաժամանակ Եկեղեցական միության մի հեռանկար, այնպես, ինչպես ինքն էր պատկերացնում:

Սուրբ գրական այն ընթերցվածը, որը հիմք ծառայեց նրա ներկայացրած տեղեկագրի, քաղված էր Պետրոս առաքյալի առաջին թղթի երկրորդ գլխից (4-րդ և 5-րդ համարները), ուր ասված է. «Մոտեցեք նրան՝ կենդանի Վեմին, որը, թեպետ մարդկանցից անարգված, բայց Աստուծո առաջ ընտրյալ և թանկագին է: Եվ դուք, իբրև կենդանի վեմեր, կառուցվում եք որպես հոգևոր տաճար, որպես անարատ քահանայություն, որպեսզի մատուցեք հոգևոր զոհեր, որոնք հաճելի լինեն Աստծուն, Հիսուս Քրիստոսի միջոցով»:

Քրիստոս է թանկագին և կենդանի վեմը ... «այն քարը, որ շինողներն անարգեցին, այն եղավ անկյունաքար» (Սղմ. 118, 22):

«Հավատացյալի համար,—նշեց դոկտ. Փոթերը իր զեկուցման մեջ,—կենդանի վեմ լինել՝ չի նշանակում առանձնացած, մենակ, քարացած, մահացած լինել, այլ նշանակում է կյանք ընդունել և կառուցված լինել իբրև մի օջախ՝ վառ հոգով:

Միջին Արևելքի ժողովուրդների մտածման մեջ «տուն» բառը բավում իմաստներ ուներ. այն, ի միջի այլոց, նշանակում էր՝ համայնք. ազգային մշակույթ, կենցաղ, կառույց, միջավայր...: Այսպես հասկացված մի տան բնակիչ լինելու կոչն է, որ ներշնչում է էկումենիկ շարժումը, մի կոչ՝ ուղղված բոլոր ազգերին: Ողջ մարդկությունը հրավիրել լինելու բնակիչները մի երկրի, որ տունն է Աստուծո, հիմնական ծրագիրն է էկումենիկ շարժման:

Գերագույն նպատակին ձգտող Եկեղեցիները պետք է լինեն «դավանող համայնք», ինչպես որ այն բանաձևում է ԵՀԽ-ի կանոնադրությունը. այն է՝ «Եկեղեցիների եղբայրական մի համայնք, որոնք, ըստ Սուրբ Գրոց, Տեր Հիսուս Քրիստոսին դավանում են իբրև Աստված և Փրկիչ և որոնք ձգտում են միասնաբար պատասխանելու հասարակաց իրենց կոչումին, ի փառս Աստուծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու»:

Եկեղեցին պետք է լինի «ուշակերտող համայնք»: Պետրոս առաքյալի նույն թղթից մի մեջբերում հատկանշում է ուսուցման դաշտը. «Որպես նորածին երեխաներ, միշտ փափագող եղեք բանական և անխարդախ կաթին, որպեսզի նրա միջոցով աճեք փրկության համար, եթե արդեն ճաշակել եք և տեսել, որ քաղցր է Տերը»: Ավելին՝ «Սովորել նշանա-

կում է գիտակցությունն ունենալ Աստուծո կամքի և նրա ուղիների»:

Եկեղեցին պետք է լինի «բաժանելից հանայնք», փոխադարձ պոհողություններով իրար միացած Եկեղեցիների մի ամբողջություն, «քահանայական մի սուրբ համայնք՝ Աստծուն հաճելի պոհողություններ մատուցող, Հիսուս Քրիստոսի միջոցով», ըստ Պետրոս առաքյալի նույն թղթի:

ԵՀԽ-ի նախագահի և գլխավոր քարտուղարի ճառերից հետո համաժողովում գլխավոր նշանաբանի շուրջ, մասնավորապես «կյանք» հասկացության մասին կանգան երկրներ ունեցան տարբեր կրոնների (մոլիսական, իսլամական, բուդդայական, հինդու, հնդիկ ամերիկյան) ներկայացուցիչներ: Սրանց հաջորդեցին քրիստոնյա մտածողների երկրները, որոնք խորհրդածության հրավիրեցին համագումարը հետևյալ գաղափարների շուրջ.

«Կյանքը՝ սարգև աստվածային».

«Կյանքը՝ միության մեջ».

«Ս. Երրորդություն-Աստված՝ աղբյուր կյանքի».

«Կյանքը՝ իր լիության մեջ».

«Կյանքը՝ հաղթող մահվան»:

«Կյանքը՝ իր լիության մեջ» գաղափարի շուրջ ներկայացված խորհրդածությունների շարքում ուշագրավ էր աստվածաբանության ուսուցչուհի Դորոթի Սոլեի (ԳՖՀ) քննադատական վկայությունը: Իր երկրում նա մասնավորապես նշեց. «Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի բոլոր եկեղեցիների ընկճված դիրքը նշանակում է, որ գործնականում նրանք համաձայն են ապառազինության ... Դրամ և բիրտ ուժ կուգենաց են քայլում: Ով որ աստվածացնում է դրամը, ստիպված է «ապահովության» սկզբունքը վերածել պետական գաղափարաբանության և ապառազինությունը՝ քաղաքական նախապատվության»:

«Մեր երկրում քրիստոնյաներից շատերն ասում են. «Ի՞նչ չարիք կա, երբ մեր ապահովությունը կորացնում ենք զինվելով: Չենք ասում ռումբ գործածել. այն ծառայում է միայն ապառնալու»: Իրականում, սակայն, ռումբը փչացնում է կյանքի լիությունը՝ խոստացված Քրիստոսի կողմից:

«... նույնիսկ չգործածված ռումբերը Աստուծո դեմ են ուղղված»:

Համաժողովում Հեկեն Կալդիկոտ անունով ավստրալիացի մի բժշկուհի՝ մանկաբուժության պրոֆեսոր, թվական տվյալներով և մասնագիտական նշումներով ներկայացրեց ատոմական զենքերի մեծ վտանգը մարդկության համար: Նա նշեց, որ «կուտակված զենքերը կարող են մեկ ժամվա մեջ մահացնել 750 միլիոն մարդ և թողնել 350 միլիոն միրավոր...»:

Բոլիվիայի հանքերում աշխատող մի բանվորի կինը հուզիչ շեշտերով խոսեց բնական ռեսուրսներով հարուստ իր երկրի բնակչության խեղճության մասին՝ նշելով. «Բոլիվիան ամեն տեսակ մետաղ և ուտեստեղեն արտադրող մի երկիր է, որտեղ ապրում ենք: Սակայն մենք ահավոր աղքատության մեջ ենք, որովհետև տնտեսապես և սոցիալական տեսակետից կախում ունենք կապիտալիստական երկրներից: ... ժողովրդական ամեն ցույցի պատասխանն է ջարդ, չարչարանք, զինվորական միջամտություն...»:

Լիբանանցի մի պատգամավոր խոսեց մահվան ավերի մասին, իր երկրում շարունակվող ռմբակոծությունների ծխի մասին, իր սիրելիների ապանության մասին և իրենց հույսի մասին, որ «առավոտը պիտի բացվի, պիտի տեսնենք Աստծուն դեմառդեմ»:

Նույն օրը համաժողովի մասնակիցների հատուկ ուշադրությանը ներկայացվեց Խաղաղ օվկիանոսում տիրող վիճակը, ուր տեղի են ունենում ատոմական ռումբերի փորձարկումներ: «Ատոմական ռումբերի վարտնվեց փորձարկումներից,—ասաց Մարշալյան կղզու մի բնակիչ,—վարակվեցին հարյուրավոր մարշալցիներ և ամերիկացիներ 1950-ական թվականներին... անհամար են այդ փորձարկումների հետևանքով առաջացած հիվանդությունները... Մարշալյան կղզիների վրա կատարվող փորձարկումների նպատակն է պարզացնել ամենաավերիչ պատերազմական զենքերը: Այս հունիսին ԱՄՆ-ը փորձարկեցին MX հրթիռները... Ամերիկացին մեզ ասում է, թե ինքը մեր կղզու վրա է գտնվում՝ «պաշտպանելու համար մեզ»: Մեր պատասխանն է՝ «պաշտպանել մեզ ո՞ւմ դեմ: Մենք թշնամի չունենք... մեր լեզվում «թշնամի» նշանակող բառ գոյություն չունի...»:

Ընդհանուր ժողովին ներկայացված սույն վկայությունները, որոնք բոլորն էլ կենտրոնացած էին կյանքի իմաստի վրա, իրրև աստվածային մի պարգևի, որը, սակայն, արդի մարդու ձեռքով շահագործված, չարչարված, աղքատացած, սարսափի, տանջանքների և մահվան ապառնալիքի է ենթարկված, ներկաների խիղճն ու հավատքը դրեցին մի մեծ պատասխանատվության առջև՝ լսելի դարձնել քրիստոնեական հավատքի ձայնը՝ բաժանելու համար արդիշի տառապանքը և մի դարման բերելու դրան, որպեսզի կյանքը հաղթի մահվան:

Այս նպատակով համաժողովի մասնակիցները բաժանվեցին մեծ ու փոքր խմբերի, որոնք մեծ ուշադրությամբ և հանգամանորեն քննարկեցին առաջադրված հարցերը: Այդ

հարցերը բաժանված էին ութ «մտահոգությունների»: Խմբերից յուրաքանչյուրը այնուհետև իր սեղեկագիրը բերեց համագումարին:

Առաջին խումբը, որի մտահոգությունն էր՝ **«Վկայել բաժանված մի աշխարհում»**, մշակեց երկու հարց. ա) **մշակույթը** որպես միջավայր ավետարանչական առաքելության. բ) աղքատությունը իբրև գլխավոր մտահոգություն:

«Մշակույթը համայնքը իրար կապող և նրան ամուր նշանակություն տվող շրջանակն է: Մշակույթը պահպանվում է լեզվի, մտածելակերպի, ապրելու ոճի, դիրքավորումների, խորհրդանիշերի և նախադրյալների մեջ. այն արտահայտվում է գեղարվեստի, երաժշտության, թատրոնի, գրականության լեզվով՝ հիշելու համար սրանք միայն: Մարդկանց հավաքական հիշողությունը նրանց հավաքական ժառանգությունն է միաժամանակ՝ սերընդից սերունդ փոխանցվող...»:

Սույն հարցերը, որոնք ծագում են ավետարանչության և մշակույթի փոխհարաբերությունից, մեկ ներկայանում են երկու օրինակներով: Առաջին օրինակը հաստատում է, որ Ավետարանը կարգացավ եբրայա-հելլենիստական միջավայրում և իմացականացավ այդ մշակույթի ավանդույթների, ինչպես նաև աշխարհայացի հիման վրա: Երկրորդ օրինակը բերված է միսիոներական փորձառությունից. երբ Արևմուտքից քարոզիչներ էին գալիս, նրանք տեղական մշակույթը համարում էին կռապաշտական և «արգելք էին հանդիսանում, որ Ավետարանը արմատանար մշակութային միջավայրում, որտեղ այն քարոզվում էր»:

Տեղեկագրում առաջարկվում էր, որ «եկեղեցական արարողությունը լինի Եկեղեցու կյանքի կենտրոնական տարրը» և, հետևաբար, արարողությունները ճոխացվեն տարբեր Եկեղեցիների և անցյալի ավանդությունների հետ փոխհարաբերություններով, բայց մանավանդ «գտնելով և հաստատելով իսկական մի կապ պաշտամունքի և սոցիալական կյանքի մեր մասնակցության միջև»:

Երկրորդ խմբի մտահոգությունն էր **«միությունը առաջացնել շոշափելի գործերով»**: Ոչ միայն այս երկրորդ խմբի, այլև համաժողովի կենտրոնական մտահոգության առարկան հանդիսացավ Լիմայի ժողովում վավերացված համաձայնական գրության (Text) ընդունումը Եկեղեցիների պաշտոնական իշխանության կողմից: Տարիների նախապատրաստությունից հետո խմբագրված և վերջնական ձև ստացած այդ գրությունը էկումենիկ շրջանակներում ծանոթ է BEM հապավված անունով (Baptism—Մկրտություն, Eucharist—Հաղորդություն կամ Պատարագ և Ministry—Կարգ կամ Ձեռնադրություն):

ԵՀԽ-ի «Հավատո և Կարգի» բաժինը Եկեղեցիների քննարկմանը ներկայացրեց վերոհիշյալ երեք խորհուրդների մասին բանաձևումների մի շարք՝ ակնարկելով, որ յուրաքանչյուր Եկեղեցի, համայնքի պարզ անդամից սկսած մինչև բարձրագույն իշխանություն, կընդունի այն, կքննարկի, կքննադատի և մի պատասխան կտա ԵՀԽ-ին մինչև 1984 թվականի վերջը, պատասխան, որը, սակայն, պետք է լինի ոչ թե աստվածաբանական ինչոր տեսակետ, այլ տվյալ Եկեղեցու պաշտոնական դիրքորոշում: Սրա նպատակն է կարկ տալ Եկեղեցիների միութենական շարժումին՝ առաջնորդելով Եկեղեցիները դեպի այն բաղձալի օրը, երբ նրանք փոխադարձաբար կճանաչեն մկրտությունը, միասին կհաղորդվեն պատարագի նույն Սեղանից և պաշտոնապես կճանաչեն մյուս Եկեղեցու պաշտոնյայի եկեղեցական կարգը:

Երրորդ խմբի մտահոգությունն էր՝ **«Առաջ տանել բաժնեկցությունը»**:

Եկեղեցու կյանքին բաժնեկից դարձնել աղքատին, անդամալույծին, մանկանը և ծերունուն, իսկապես լինել մարդկային՝ «հանդիպելով ուրիշին և մասնակից լինելով նրա ցավին ու պայքարին», դա քրիստոնեական ճշմարիտ կյանքին տանող միակ ճանապարհն է:

Հատուկ կոչերով թելադրվում է Եկեղեցիներին, որ ավելի տեղ տան երիտասարդներին, ավելի դաստիարակություն՝ աշխարհականներին, ավելի պատասխանատվություն՝ կանանց, նկատի ունենալով մինչև իսկ նրանց ձեռնադրությունը, ավելի մեծ ուշադրություն և կարևորություն ընծայեն կրոնական նոր խմբակցություններին, ժողովրդական կրոնական շարժումներին՝ բոլորին բաժնեկից դարձնելու համար Եկեղեցու հաղորդությանը:

Չորրորդ խմբի կողմից ներկայացված մտահոգությունն էր՝ **«Ապրել միասին՝ մասնակից և բուժող մի համայնքում»**:

«Խաչն է արտահայտությունը ամբողջական վոհաբերության, որով Հիսուս ինքն իր անձն է տալիս ամբողջապես»: Այն սկսվում է Պատարագով, որի հաղորդությանը կոչված է ամեն մարդ: Սակայն այն կատարվում է իրապես ծառայությամբ, «որով Եկեղեցիները կոչված են տալու ոչ թե ինչ որ **ունեն**, այլ՝ ինչ որ **են**»:

Հիշյալ փաստաթուղթը գործնական առաջարկներ է ներկայացնում Եկեղեցիներին՝ բաժանելու իրենց հարստությունները, աղքատ և տկար Եկեղեցիներին օգնելով քաջալերանքով, նյութական աջակցությամբ,

բժշկական առաքելություններով, առողջապահական ծրագիրներով:

Հինգերորդ խմբի ներկայացրած մտահոգությունը ամենից ծանրն էր. **«Դիմագրավել խաղաղությանը և կրանքին սպառնացող մտահոգները»:**

Դժվար է ամփոփել այստեղ այս խմբի կողմից ներկայացված տեղեկագրի բովանդակությունը, որովհետև այն արդեն ամփոփումն է Ամստերդամի Խորհրդակցության հրապարակած գրքի, որն ունի «Երբ ոչ չէ դեռ» վերնագիրը, ինչպես նաև երկհատոր այն գրքի, որը հրատարակվեց ականավոր գիտնականների ու աստվածաբանների միջև Բոստոնում կայացած հանդիպումից հետո և որի վերնագիրն է «Հավատք և գիտություն»: Կբավարարվենք այստեղ հիշելով միայն այդ փաստաթղթի կարևոր վերնագրերը, որոնք ինքնին ընդհանուր մի գաղափար են տալիս ներկայացված նյութի տարողության մասին:

«Հասարակաց ապահովությունը ենթադրում է՝

ա.—Հարգել բոլոր ազգերի և ժողովուրդների արդար իրավունքները.

բ.—Առաջ բերել փոխադարձ հասկացողություն և գնահատանք մշակույթների, կրոնների և գաղափարախոսությունների միջև:

գ.—Միջազգային տարողությամբ լայն համագործակցություն գիտության և մասնագիտության, տնտեսության և մշակույթի միջև.

դ.—Փոխակերպում ամեն տնտեսության զինվորականից դեպի քաղաքացիական արտադրություն.

ե.—Օգտագործել և կորացնել Միավորված Ազգերի Կազմակերպությունը և այլ միջազգային հաստատություններ, որոնք ունեն նույնանման նպատակներ.

զ.—Զարգացնել միջազգային մի օրենսդրություն և միջոցներ ստեղծել լուծելու միջազգային հակամարտությունները դատարանական դրությամբ՝ ապահովելով որոշումների գործադրությունը:

է.—Ավելի արդյունավետ դարձնել միջազգային մեճերը խաղաղ ճանապարհով լուծելու մեխանիզմը:

Վեցերորդ խմբի կողմից՝ ներկայացված մտահոգությունն էր՝ **«Պայքարել ի խնդիր արդարության և մարդու արժանապատվության»:**

Հաստատելուց հետո, թե մարդկային ամեն տեսակ տառապանքներն ու սոցիալական պայքարները արդյունք են անարդարության վրա հիմնված իշխանությունների, որոնք ավելի են աղքատացնում աղքատին, լռեցնում նրա բողոքը, ճնշում ժողովրդական ամեն շարժում և շահագործում տկարին, վեցերորդ խմբի տեղեկագիրը թելադրում է պայքարել ոանուն քրիստոնեական մեր հավատքի:

«Պայքարել ի խնդիր արդարության և մարդկային արժանապատվության՝ նշանակում է հակադրվել բռնակալ իշխանությունների չարաշահություններին: .... Անհրաժեշտ է նեցուկ կանգնել Եկեղեցիների հաստատած միջազգային ցանցերին՝ ուժ տալու համար ժողովրդական պայքարներին ընդդեմ ճնշման, բողոքել և պայքարել անարդարության խոր պատճառների դեմ՝ ի խնդիր մի նոր հասարակություն ստեղծելու հեռանկարի»:

Յոթերորդ խմբի ներկայացրած մտահոգությունն էր՝ **«Լինել վարժվող մի համայնք»:** Այստեղ շեշտը դրված է ընտանեկան դաստիարակության վրա: Տեղեկագրում նշված է. «Համայնքի քրիստոնեական դաստիարակությունը պետք է հիմնված լինի ընտանիքի վրա»: Եկեղեցիները այսօրվա սոցիալական նոր պայմաններում պետք է փնտրեն դաստիարակության նոր ձևեր՝ պաշտամունքի ընթացքում, այցելություններով, ընկերային կյանքի միջոցով:

Ութերորդ խմբի մտահոգությունն էր՝ **«Հաղորդակցվել հավատալիորեն»:**

Այս փաստաթուղթը ներկայացնում է մի խոր քննադատություն՝ ուղղված ժամանակակից հաղորդակցության միջոցների դեմ: Տեղեկագիրն ավարտվում է մի շարք թելադրություններով.

ա.—«... Հստակ է կարևորությունը լեզվի և մշակույթի՝ էկումենիկ հաղորդակցության դեպքում: Շատ տեղերում հաղորդակցելու մեր միջոցները չեն արմատավորված տեղական և ազգային մեր մշակույթի մեջ...»:

բ.—Որոնել հաղորդակցության նոր ձևեր:

գ.—Խոսակցության նստել բոլոշակիցների հետ՝ գործակցելու նպատակով:

դ.—Ստեղծել քրիստոնեական հաղորդակցության և լրատվության միջոցներ:

* * *

Համաժողովի ընթացքում Մայր Աթոռի պատվիրակությունը, մարդկային իրավունքների խախտման մասին համաժողովի կատարած քննության ժամանակ, ընդհանուր նիստին ներկայացրեց հայերի դեմ կատարված ցեղասպանության պատմական իրականությունը՝ առաջարկելով, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Մարդկային իրավունքների Հանձնաժողովը մի հայտարարություն ընտանձնի այս մասին: Առաջարկը ընդունվեց ծափերով:

Քաջալերված համակրության արտահայտություններից՝ Մայր Աթոռի պատվիրակությունը 1 օգոստոս 1983 թվակիր պաշտո-

ՀՍՍՀ

նական մի նստակով պատկան Հանձնախումբին ներկայացրեց հայկական հարցը և առաջարկեց մի հայտարարության բանաձևումը:

Պատկան Հանձնախմբի ատենապետը համագումար ժողովին բերեց արձանագրության մի բանաձև հայ ցեղասպանության մասին: Համագումարը քվեարկեց հետևյալ բանաձև.

1. «Մարդկային իրավունքների խախտման մասին համագումարի կատարած քննության ընթացքում մեր ուշադրությանը հանձնվեց ցեղասպանության իրականությունը և նրա այժմեական սպառնալիքը որոշ ժողովուրդների դեմ: Շատ հաճախ լուռ անցնում ենք նման դեպքերի վրայից: Ընթացիկ կանոնական առիթներով լռությունը օգտագործվում է որոշ խմբակների կողմից՝ արդարացնելու համար բոլորովին անընդունելի բիրտ արարքները:

2. Այս առնչությամբ մի անգամ ևս մեկ հիշեցրին Թուրքիայում կատարված մեկ ու կես միլիոն հայերի կոտորածը և կես միլիոն հայերի տարագրությունը իրենց հայրենիքից, մեր դարի սկզբին: Աշխարհի մարդկության լռությունը և նույնիսկ պատմական իրողությունները ժխտելու ճիգերը մնայուն աղբյուրը եղան անձկության և հարաճուն հուսահատության հայ ժողովրդի, հայ եկեղեցիների և ուրիշ շատերի:

3. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջազգային հարցերով զբաղվող Հանձնախումբը Մարդկային Իրավունքների Հանձնախմբի սույն մտահոգությունը հայտնել է Միացյալ Ազգերի Կազմակերպությանը, կցվելու համար վերջինիս նախաձեռնած աշխատանքներին, «Ցեղասպանության ոճիրը պատժելու և կանխարգելելու հարցի մասին»:

4. Համագումար ժողովը խնդրում է գլխավոր քարտուղարին, որ տեղեկություններ հայթայթի Եկեղեցիներին այս հարցի մասին և հետապնդի այն պատշաճ առիթներով: Պատմական այս իրողությունների հրապարակային ճանաչումը էական է, որպեսզի չշարունակեն առիթ տալ բիրտ և վրեժխնդիր արարքների, և որպեսզի հայ ժողովրդի պատմության հիշեցումը խնայի նման մի ճակատագիր՝ ուրիշ ժողովուրդների»:

*
* *

Համագումար երկարատև նիստերից հետո ընդունեց մի շարք բանաձևեր ու հայտարարություններ, որպես եզրակացություն իր քննարկած հարցերի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ներկայումս մարդկությունն ապրում է սպառազինությունների մրցավազքի և անարդարության համակարգերի խավարի մեջ, որից առավել կորեղ, առավել տարածված, առավել վտանգավոր ու մերձարժեք բան չի եղել երբևէ: Մարդկային ցեղը երբևէ այսքան մոտ չի գտնվել ամբողջական ինքնաոչնչացման: Մարդիկ երբեք այսքան շատ չեն ապրել կարիքի ու զրկանքների ճիրաններում:

2. Պարունակված այդ խավարով՝ մենք հավաքվել ենք այստեղ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի վեցերորդ համագումարին (Վանկուվեր, 1983 թ.), որպեսզի հանդիսավորապես հայտարարենք մեր հաւարակաց հավատը ի Քրիստոս, որ կյանքն է աշխարհի, և ասենք աշխարհին՝ մի՛ վախեցեք, վասնզի Քրիստոս հաղթահարեց ուժերը չարի, Նրա մեջ ամեն ինչ նոր է, մի՛ վախեցեք, վասնզի Աստուծո սերը ըմբոստանում է հանուն արդարության և խաղաղության. ապավինե՛ք Քրիստոսի ուժին, Նա իշխում է ամեն ինչի վրա. վկայեցե՛ք Նրան բանիվ և գործով՝ հաշվի չառնելով ձեր կրելիք վնասը:

ԱՃՈՂ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԸՆԴԴԵՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

3. Երբ մենք տագնապով հետևում ենք, թե մեր վերջին հանդիպումից հետո ինչպիսի արագությամբ է աճել սպառնալիքը ընդդեմ խաղաղության և կյանքի, խոստովանության պահանջ ենք զգում: Սրընթաց կերպով արագացել է խելահեղ վազքը դեպի միջուկային հրդեհը:

Հիրոսիմայի և Նագասակիի սարսափից և այն սպառնալիքից, որ այդ կարող է կրկնվել այլուր, պատմական անհնարին կարճ ժամանակամիջոցում, մենք զգացինք այն հավանականությունը, որ եթե մենք այժմ չսկսենք գործել, կյանքը ողջ մոլորակի վրա կոչնչանա: Խելացնորության մի վայրկյանում, ստրատեգիական արկածախնդրության մեջ մի հաշվեսխալից, հաշվիչ մեքենայի պատահական սրխալների կուգակցումից, ուղղակի սխալից,— այս ամենից այսօր կարող է սկսվել միջուկային աղետը:

4. Համագումարի ընթացքում մեկ հստակորեն հիշեցրին, որ միջուկային զենքը իր կոհերն է ունենում նաև ոչ պատերազմական

տամանակ միջուկային զենքի փոքրաքանակության և միջուկային թափոնների անվերջանալի հետևանքների պատճառով:

5. Բայց միլիոնավոր մարդկանց կյանքին անմիջականորեն սպառնում է բնավ ոչ միջուկային զենքը: Տեղական, ազգային և միջազգային ընդհարումները մոլեգին ամլացածություններ են գործում աշխարհում: Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի միջև ընդհարումների տրամախաչումը մարդկային զանգվածների համար վերածվել է զանգվածային անարդարության, մարդու իրավունքների սիստեմատիկ խախտման, կեղեքման, անօթևանության, սովի և մահվան: Միլիոնավոր մարդիկ զրկվել են քաղաքացիությունից, քշվել են իրենց տներից և դարձել փախստական ու գաղթական:

6. Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը Եկեղեցիների ուշադրությունը հրավիրում է խաղաղությանն սպառնացող տնտեսական վտանգին: Անգամ առանց պատերազմի, հարարավոր մարդիկ մեռնում են սովից կամ թերասնումից թե՛ հարուստ և թե՛ աղքատ երկրներում: Աղքատությունը և մարդկային տառապանքը արդի պատմության մեջ, անարդարության տարբեր ձևերի պատճառով հասել են անօրինակ մակարդակի: Ժողովուրդները առաջվա նման ստիպված են, որպես վերջին միջոց, դիմել զենքի, որպեսզի իրենց պաշտպանեն սիստեմատիկ բռնություններից, պաշտպանեն ինքնորոշման և անկախության իրենց իրավունքները:

7. Այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհում մեկ օրվա ընթացքում սպառազինությունների վրա ծախսվում է մոտ երկու միլիարդ ամերիկյան դոլար, համաշխարհային տնտեսությունը հասակել է երկարատև և խորացող ճգնաժամ, որը սպառնալիքի տակ է դնում ինչպես յուրաքանչյուր երկրի, այնպես էլ միջազգային անվտանգությունը: Առևտրական պատերազմը, մրցակցային հողի վրա փողի արժեզրկումը և ֆինանսական ճգնաժամը դարձել են ամենագր: Այս ճգնաժամը իր հետ բերել է զարգացող երկրների նկատմամբ էլ ավելի անարդարություն՝ միլիոնավոր մարդկանց զրկելով գոյատևման ամենակենսական միջոցներից: ՅՈՒՆԿՏԱԴ-ի 2 կոնֆերանսի անարդյունավետությունը խորտակեց Հյուսիսի և Հարավի միջև բովանդակալից բանակցություններ վարելու հույսերը, չնայած որ այստեղ առկա են շատ գործոններ. կապը սպառազինությունների մրցավազքի և տնտեսական զարգացման միջև, պաշտպանության բյուջեների մեծացող արդյունքները, արդյունաբերական երկրների զենքի արտադրության էլ ավելի մեծ հույսերը և սրանցից բխող միջազգային համակարգի բարվածությունը, ամբողջությամբ վերցրած, հատուկ սպառնալիք են ներկայացնում խաղաղությանն ու արդարությանը:

ԱՌԱՆՑ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՉԿԱ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

8. Աշխարհի ժողովուրդներին հարկավոր է խաղաղություն և արդարություն:

Խաղաղությունը պատերազմի սովորական բացակայությունը չէ: Խաղաղությունը պետք է կառուցվի արդարության վրա: Խաղաղությունը պահանջում է նոր միջազգային կարգ՝ հիմնված բոլոր երկրների ներքին արդարության վրա. Աստծու կողմից յուրաքանչյուր մարդու տրված մարդկայնության և արժանապատվության հարգանքի վրա: Ինչպես սովորեցնում է մեկ Եսայի մարգարեն՝ խաղաղությունը արդարության պտուղն է:

9. Այսօր Եկեղեցիները կոչված են նոր ձևով դավանելու իրենց կրոնը, խոստովանելու, որ քրիստոնյաները երբեմն լռել են արդարության կամ խաղաղության դեմ սպառնալիքի առջև: Խաղաղության և բոլորի համար արդարության, միասնականության, Աստուծո ամբողջ ժողովրդի համախմբվածության աստվածաշնչային ընկալումը Քրիստոսի հետևորդների համար ընտրության հարց չէ: Դա մեր ժամանակի անպայմանական պահանջն է:

10. Խաղաղության և արդարության հանդեպ էկումենիկ մոտեցումը բխում է այն համոզմունքից, որ առանց արդարության, բոլորի համար և ամենուր, մենք երբեք և ոչ մի տեղ չենք հասնի խաղաղության: Էկումենիկ շարժման սկզբի օրերից իսկ խաղաղությունը և արդարությունը եղել են նրա հիմնական խնդիրները: Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը ծնվել է վերահաս համաշխարհային պատերազմի որոտի տակ: Իր հիմնադրման առաջին իսկ պահից նա դատապարտել է պատերազմը և գործնականորեն անընդհատ ջանացել է պատերազմի առաջն առնել, պատերազմի զոհերին օգնություն ցուցաբերել և թույլ չտալ նոր պատերազմի բռնկում: Նա մերկացրել է ընդհարումներ ծնող անարդարությունը, արտահայտել է իր համերաշխությունը խաղաղության և արդարության համար պայքարող խմբավորումների և շարժումների հետ, ձգտել է ըմբռնել ընդհարումների խաղաղ լուծմանը տանող ուղիներ: Նա բազմիցս Եկեղեցիների և նրանց միջոցով կառավարությունների և հասարակության ուշադրությունը հրավիրել է խաղաղության և կյանքի դեմ սպառնացող վտանգի ու խորացող ճգնաժամի վրա: Քրիստոնյաները և Եկեղեցիները, ինչպես երբեմ

անցյալում, պետք է միահամուռ գործեն հանուն խաղաղության և արդարության:

ԱՆՍԱՆՁԵԼԻ ՄԻԼԻՏԱՐԻԶՄ

11. Ծանոթանալով հինգերորդ համագումարից (Նայրոբի, 1975 թ.) մինչև այս համագումարն ընկած ժամանակաշրջանում միլիտարիզմի հարցով ԵՀԽ-ի կատարած աշխատանքին, մենք սկսեցինք ավելի լայնորեն հասկանալ, թե ուշադրության համար ինչպիսի սարսափելի հետևանքներ ունի այն փաստը, որ ժողովուրդները ավելի են հենվում ռազմական ուժի օգտագործման վրա որպես արտաքին, իսկ հաճախ նաև ներքին խաղաքաղաքականության հիմք: Վտանգավոր կերպով խեղաթյուրվել է խնդիրների հերթական կարգը: Ուշադրությունը շեղվել է աղքատ երկրների և հարուստ երկրներում ապրող աղքատների հիմնական իրավունքներից և կարիքներից: Զինվորական վարչակարգերի թիվը մեծացել է, և դա ավելի է նպաստել համընդհանուր միլիտարիզացիայի և նրա ստեղծած վատ իրավակարգերի տիրապետության պրոցեսին: Արդարությունը հաճախ ստիպաբերվում է նեղ կերպով ըմբռնված ազգային անվտանգության շահերին: Ցեղային, էթնիկական, մշակութային, կրոնական և գաղափարական հակամարտությունները սրվել են, գերակշռում է ապականությունը, հանդես են գալիս վախն ու կասկածամտությունը, որովհետև ուրիշներին ավելի ու ավելի են ներկայացնում որպես թշնամիներ: Այս ամենը է՛լ ավելի է մեկուսացնում մարդկանց, պատճառում տառապանք և ուժեղացնում սպառնալիքը ընդդեմ խաղաղության:

12. Մենք նորից ենք կրկնում Կենտրոնական Կոմիտեի կոչերը՝ ուղղված Եկեղեցիներին.

ա) Մարտահրավեր նետել ռազմական և միլիտարիստական քաղաքականությանը, որը աղետալիորեն խեղաթյուրում է արտաքին քաղաքականությունը՝ աշխարհի ժողովուրդներին զրկելով տնտեսական և սոցիալական հրատապ խնդիրների լուծման հնարավորությունից, խնդիրներ, որոնք դարձել են մեր ժամանակի հիմնական քաղաքական հարցը:

բ) Հակադրել ատելության ներշնչման և նախապաշարումների միջոցով ուրիշ ազգերի և գաղափարախոսությունների ներկայացուցիչներին որպես «թշնամիներ» ներկայացնելու միտումներին:

գ) Օգնել գոյություն ունեցող «ազգային անվտանգության» առասպելների պսակազերծմանը և մշակել անվտանգության նոր ըմբռնումներ՝ արդարության և ժողովուրդների իրավունքների հիման վրա:

դ) Ուսումնասիրել կարևոր աստվածաբանական այն խնդիրները, որոնք առնչվում են պատերազմի և խաղաղության հարցի վերաբերյալ նոր ըմբռնումների հետ և պարզաբանել ավանդական դիրքավորումների դեմ նետված մարտահրավերները:

ե) Հատուկ ուշադրություն նվիրել նրա՛նց իրավունքներին, ովքեր զինվորական ծառայությունից հրաժարվում են խղճի մտոք:

զ) Շարունակել մարդկանց ուշադրությունը հրավիրել պատերազմի արմատական պատճառների, հիմնականում տնտեսական անարդարությունների, ճնշումների, շահագործումների, աճող լարվածության հետևանքների, այդ թվում նաև՝ մարդու իրավունքների հետագա սահմանափակումների վրա:

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

13. Լուրջ անհանգստություն է առաջացնում ազգային անվտանգության ըմբռնումի կոպիտ խեղաթյուրումը, արտաքին միջամտության և ռազմական բյուջեների աճի արդարացման նպատակով: Ոչ մի ազգ չի կարող հավակնել, որ ինքն անվտանգության մեջ է, քանի դեռ արհամարհվում և չեն պահպանվում մյուս ազգերի ինքնիշխանության և անվտանգության օրինական իրավունքները: Այդ իսկ պատճառով, անվտանգությունը կարող է ապահովվել միայն այն ժամանակ, երբ բոլոր ազգերի միասնական գործողություններով ձեռնամուխ լինեն դրա իրականացմանը՝ նկատի ունենալով նաև այն, որ անվտանգությունը անբաժանելի է արդարությունից: Ազգերի «Ընդհանուր անվտանգության» գաղափարը պետք է ամրացվի «Մարդկանց անվտանգության» գաղափարով: Մարդկանց իսկական անվտանգությունը պահանջում է հարգանք մարդու իրավունքների հանդեպ, ներառյալ ինքնորոշման իրավունքի, պահանջում է նաև ամեն երկրում, բոլորի համար ընկերային և տնտեսական արդարություն և քաղաքական այնպիսի կառուցվածք, որն ապահովի այդ:

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ ԽԱՂԱՂ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

14. Այս կապակցությամբ լուրջ անհանգստություն են առաջացնում միջազգային խաղաղության և անվտանգության պահպանությանն և կոնֆլիկտների խաղաղ լուծման նպատակով ՄԱԿ-ի կողմից տրամադրված հնարավորություններն օգտագործելուց և նրա բանաձևերը ի կատար ածելուց շատ կառա-

գարությունների հաճախակի հրաժարումները: Մենք կոչ ենք անում կառավարություններին վերահաստատել իրենց համաձայնությունը ՄԱԿ-ի կանոնադրության, միջազգային տարաձայնությունները ներկայացնել Անվտանգության խորհրդի քննարկմանը՝ իրենց սեպհական փոքում, երբ հնարավոր է այդ տարաձայնությունները լուծել առանց ռազմական ուժի գործադրման դիմելու, և նաև համագործակցել Խորհրդի հետ՝ կոնֆլիկտների խաղաղ լուծման որոշումների մեջ: Մենք Եկեղեցիների հատուկ ուշադրությունն ենք հրավիրում ՄԱԿ-ի «Միջազգային խաղաղության տարվա (1986)» անցկացման և «Զինաթափման համաշխարհային արշավ»-ի վրա՝ հանձնարարելով նրանց այս կարևոր միջոցառումներն օգտագործել միջազգային անվտանգության ուժեղացման, զինաթափման, խաղաղության ու արդարության գործին տատարելու համար:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՁԵՆՔ ԵՎ ԶԻՆԱԹԱՓՈՒՄ

15. Անցել է ամբողջ մի տասնամյակ այն տամանակվանից, երբ վերջին անգամ ապառազինության վրա վերահսկողություն տահմանելու ուղղությամբ ձեռնարկվեցին էական և հետագայում վավերացված միջոցներ: Մեր նախորդ համագումարից ի վեր ամբողջ աշխարհում ռազմական ծախսերը երեք անգամ աճել են: Այս տարի հատկապես սրվել է ՆԱՏՕ-ի և Վարշավյան պայմանագրի համագործակցության միջև առճակատման վտանգը: Կա այն ստոյգ հեռանկարը, որ եթե ներկայումս ԱՄՆ-ի և ՍՍՀՄ-ի միջև ժնևում կատարվող բանակցությունները չկարողանան կանխել այդ, ապա մոտակա տասը տարիների ընթացքում ամբողջ աշխարհում միջուկային զենքի պաշարները զգալիորեն կաճեն: Այս զենքի՝ արդեն արձակման պատրաստ կամ ներկայումս մշակվող նոր տեսակների էլ ավելի կատարելագործումը, ճշգրտությունն ու արագ տեղաշարժումը միջազգային իրադրությունն ավելի վտանգավոր և անկայուն են դարձնում, քան երբևէ եղել է անցյալում: Միջուկային զենքին տիրապետող տերությունների միջև ապառազինության վերահսկողության շուրջ համաձայնության չգալը, գործնականում, այդ զենքը չտարածելու վերաբերյալ պայմանագիրը դարձրել է վրդովեցուցիչ իրականության միջոց ու միջուկային զենքի ծավալման դրդիչ և հարավային կիսագնդի մի քանի լարված շրջաններում ստեղծել է միջուկային պատերազմի հեռանկար: Մինչև որ գերիսկոր տերությունները վճռական միջոցներ չձեռնարկեն, միջուկային զենքի ծավալումը կանգնելու բոլոր փորձերը կխոչընդոտվեն ձախողման:

16. Մենք կոչ ենք անում Եկեղեցիներին, հատկապես Արևելյան և Արևմտյան ու Հարավային Ամերիկայում գործող Եկեղեցիներին կրկնապատկել իրենց ջանքերը, որպեսզի իրենց կառավարություններին համոզեն համաձայնության գալու և, քանի դեռ ուշ չէ, հրաժարվել Եվրոպայում միջուկային զենքի նոր տեսակների տեղաբաշխման պլաններից և անմիջապես սկսեն դրանց կրճատումը ու ապա միասնաբար ամբողջովին դուրս բերեն այնտեղից իրենց միջուկային ուժերը:

17. Մենք նաև համառորեն կոչում ենք անում Եկեղեցիներին բազմապատկել իրենց ջանքերը Հեղկական և Խաղաղ օվկիանոսների շրջաններում միջուկային զենքի արագ աճող տեղադրման առաջն առնելու նպատակով և ճնշում գործադրել իրենց կառավարությունների վրա, որպեսզի նրանք ետ քաշեն իրենց ուժերը կամ հրաժարվեն այդ շրջաններում միջուկային զենքեր կրող նավեր ու ինքնաթիռներ տեղաբաշխելուց:

18. Միջուկային զենքի հնարավոր վտանգը սատկանում է նրանով, որ ավելի շատ են ապավինում սովորական զենքին: Ազանգվածային բնաջնջման ոչ միջուկային զենքի պաշարները աճում են՝ համարյա դուրս մնալով վերահսկողությունից: Սովորական զենքերի հույժ շահավետ առևտրի ծավալը վերջին հինգ տարիների ընթացքում համարյա կրկնապատկվել է: Դրանց զգալի մասը ուղարկվում է զարգացող երկրներ և այնպիսի շրջաններ, որտեղ զինված ընդհարումներն արդեն հնարավոր չէ զսպել: Այս զենքերի ավելի ուժն անընդհատ աճում է՝ վերացնելով սովորական և միջուկային պատերազմների միջև եղած տարբերությունը: Միջուկային զենքի զինաթափման շատ ռազմագետներ սպահանջում են սովորական զենքերի արտադրության և տեղաբաշխման զգալի ընդլայնում:

19. Նայրոբիում տեղի ունեցած համագումարից հետո ԵՀԽ-ն անցկացրել է մի շարք խորհրդակցություններ և կոնֆերանսներ, որոնք Եկեղեցիներին հնարավորություն տվեցին ավելի խորը հասկանալու վերոհիշյալ խնդիրների էությունը: Պատրաստվել են արժեքավոր զեկուցումներ ու հանձնարարականներ Եկեղեցիների կոնկրետ գործունեության համար: Այս տիպի ամենավերջին միջոցառումը եղավ միջուկային զենքի և զինաթափման շուրջ հրապարակային քննարկումը Ամստերդամում 1981 թվականին: Հրապարակված հաշվետվությունն իր մեջ ընդգրկում է այդ հարցի մանրակրկիտ և մանրամասն վերլուծությունը և մատնանշում է Եկեղեցիների

համար անհետաձգելի խնդիրները: Մենք Եկեղեցիներին թախանձագին խնդրում ենք կրկին ուշադիր ուսումնասիրել այդ հաշվետվությունները և հետևել դրանց հանձնարարականներին:

20. Կենտրոնական Կոմիտեն կոչ է անում Եկեղեցիներին հատուկ ուշադրություն դարձնել և որոշակի դիրք գրավել այն բազմաթիվ հարցերում, որոնք շոշափված են Ամստերդամի ժողովի հաշվետվությունում: Մենք կրկնում ենք այդ կոչը հետևյալի մասին.

ա) Ո՛չ մի երկրում, ո՛չ մի շրջանում և ո՛չ մի սոցիալական սիստեմի տակ միջուկային պատերազմը չի կարող լինել արդարացի կամ չի կարող արդարացվել այն պատճառով, որ նրա պատճառած ավերածությունները անհամեմատ ավելի կլինեն այն բարիքներից և առավելություններից, որ կարելի է նրանից քաղել.

բ) Միջուկային պատերազմը հավիտ թե նմնա սահմանափակ. այդ իսկ պատճառով միջուկային զենքի «սահմանափակ» օգտագործման վերաբերյալ ամեն մի միտք, որպես վտանգավոր մտահղացում, պետք է իսկույն ետ դատապարտել:

գ) Բոլոր պետությունները, որոնք ներկայումս տիրապետում են կամ ընդունակ են մոտ ապագայում տիրապետելու միջուկային զենքի, պետք է հաստատակամորեն հրաժարվեն այն «առաջինը օգտագործելու» քաղաքականությունից, իբր անհետաձգելի միջոցառում վստահության ամրապնդման գործում:

դ) Ահաբեկման հասկացությունը, որի ստուգությունը կախված է միջուկային զենքի օգտագործման հնարավորությունից, պետք է վճռականորեն մերժվի, որպես բարոյապես անհանդուրժելի և անարդյունավետ միջոց՝ խաղաղությունը և անվտանգությունը պահպանելու համար:

ե) Միջուկային զենքի արտադրությունն ու տեղաբաշխումը, ինչպես նաև նրա օգտագործումը հանդիսանում են ոճիր մարդկության դեմ, և այդ պատճառով հարկավոր է լիովին դադարեցնել միջուկային զենքի արտադրությունը ու նաև սպառազինության բնագավառի բոլոր հետազոտություններն ու նրանց մշակումները բոլոր երկրներում, հարկավոր է պայմանագրի միջոցով շտապ կերպով դրան հակադրել այնպիսի մի դիրքորոշում, որը կնպաստի մարդու պայքարին՝ հանձն առնել տալու իր սեփական երկրին երբեք չունենալ և չօգտագործել միջուկային զենք, չնայած միջուկային խոցելիության, և համերաշխություն ու օժանդակություն ցուցաբերել քրիստոնյաներին ու բոլոր նրանց, ովքեր հրաժարվում են գործակցել կամ աշխատել միջուկային զենքի և միջուկային պատերազմի հետ առնչվող ցանկացած նախագծում:

զ) Բոլոր երկրները պետք է համաձայնեն և վավերացնեն միջուկային փորձարկումների լրիվ արգելման մասին պայմանագրերը, որպես անհրաժեշտ քայլ միջուկային զենքի տեխնոլոգիայի հետագա մշակումների դադարեցման գործում:

է) Պետք է ողջունել միջուկային և սովորական զենքերի վինաթափման առաջնորդող բոլոր միջոցառումները՝ համարելով դրանք որպես իրար լրացնող և իրար վորացնող ուժ. դրանց մեջ են մտնում արդյունավետ որոշումների տանող բազմակողմանի կոնֆերանսները, երկկողմանի բանակցությունները, որոնք կանցկացվեն համարձակ ու կայուն, ու նաև միակողմանի նախաձեռնությունները, որոնք կտանեն լարվածության թուլացմանը և պետությունների ու ազգերի միջև փոխադարձ վստահության ամրապնդմանը:

21. Բացի դրանից, մենք հանձնարարում ենք Եկեղեցիներին իրենց կառավարությունների վրա ճնշում գործադրել, որպեսզի նրանք հրաժարվեն հետագա ամեն մի հետազոտությունից, արտադրությունից կամ տիեզերքում զենք տեղադրելուց, ու նաև սարքելեն պանգվածային բնաջնջում կամ խառնաշփոթություն առաջացնող բոլոր զենքերի, այդ թվում նաև քիմիական և բիոլոգիական զենքերի բոլոր տեսակների մշակումն ու արտադրությունը:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

22. «Մարդկանց ծառայելու, մարդկանց միջև անջրպետների հաղթահարման և խաղաղության ու ճշմարտության ներքո մարդկության միասնական ընտանիքի ստեղծման գործում Եկեղեցիների ընդհանուր շահերը արտահայտելու» ԵՀԽ-ի նպատակների իրականացման համար վերջին համաժողովի գումարումից ի վեր գործադրած մեր ջանքերին օժանդակում, ուժ էր տալիս Սուրբ Հոգին՝ Եկեղեցիներին մղելով նոր նախաձեռնությունների:

Այս վերափոխման պրոցեսում հաճախ վճռական դեր են խաղացել կանայք և երիտասարդները, որոնք մարդկանց հետ կիսելով իրենց գաղափարները՝ նրանց տարել են իրենց ետևից: Բայց մեր ընդհանուր հավատքը և մեր ապրած ժամանակը մեկանից, որպես Աստուծո ստեղծածների պահապաններից, պահանջում են մեր առավելագույնը անել:

23. Քրիստոնյաները ներկայումս գոյություն ունեցող վտանգը բնական համարել չեն կա-

բող: Մենք չպետք է հուսահատվենք: Որպես հավատացողներ մեր միակ Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին՝ աշխարհը կառավարողին, մենք հանդիսանում ենք ստեղծագործության ապագայի նկատմամբ Աստուծո հոգի պահապանները:

Մենք ճանաչեցինք Աստուծո սերը և դավանում ենք Տիրոջ կյանքի պատմությունը: Նրանով մենք ունենք կյանքի լիակատարության խոստումը: Աստուծո ողորմությունը անփերջանալի է, և Սբ. Հոգին ապրում է մեր մեջ՝ մեր սրտերում վառելով երկյուղը վանող սեր, նորոգելով մեր աշխարհընկալումը, հույսով մեր երևակայությունը, տանելով մեզ անապատի միջով, ապատագրելով և միավորելով մեզ:

Աշխարհի ժողովուրդները ավելի ու ավելի մեծ թվով են ոտքի ելնում՝ պահանջելով արդարություն, կոչելով՝ խաղաղություն: Սրանք ազգերի հոգեների նշանակներն են:

24. Մենք ընդունում ենք, որ հաճախ տարբեր ձևով ենք մոտենում ճշմարտության և խաղաղության հարցերին, որ Եկեղեցիները բանավեճերում տարբեր եզակետեր ունեն այն մեծ բազմազանությունների պատճառով, որոնք վերաբերում են մեր պատմությանը, ավանդություններին և կյանքի պայմաններին, որ մենք ապրում ենք և կրում մեր վկայությունը:

Մենք կոչ ենք անում Եկեղեցիներին՝

ա) Ավելի եռանդուն գործել բաժանված աշխարհում ընդհանուր վկայության զարգացման համար, նոր ուժով ընդդիմանալ խաղաղությանը և կյանքին սպառնացող վտանգին, նաև մասնակցել արդարության և մարդկային արժանապատվության համար մղվող պայքարին:

բ) Դառնալ խաղաղության և արդարության կենդանի վկայություն՝ աղոթքով, Աստծուն պատարագ մատուցելով և կոնկրետ մասնակցությամբ:

գ) Ձեռնարկել քայլեր միության հասնելու համար, ապահովելով հանատեղ գործողությունների ավելի լայն հնարավորություններ ինչպես Եկեղեցիներում, այնպես էլ Եկեղեցիների միջև, միմյանց տեսակետներն ավելի լավ իմանալու և հասկանալու համար՝ չենթարկվելով մեկ բաժանող և միմյանցից մեկուսացնող ոչ մի փորձության:

դ) Աշակել նորարարական մոտեցում խաղաղության և արդարության ոգով կազմված դասախարակության ծրագրերի նկատմամբ:

25. 1980 թ. Ժնևյան պայմանագրի համաձայն, միջազգային իրավունքը արգելում է զենքերի որոշ տեսակների գործածությունը: Մենք գտնում ենք, որ միջուկային զենքը պետք է դասվի այդ արգելված զենքերի կարգին:

Մենք բաժանում ենք այն համոզումը, որին հանգել է միջուկային զենքի և զինաթափման Ե<Հ-ի Հանրային դատարանի խումբը վկաստանագետների լայն ցուցմունքները ուսումնասիրելուց հետո. «Մենք կարծում ենք, որ եկել է ժամանակը, երբ Եկեղեցիները պետք է անվերապահորեն հայտարարեն, որ միջուկային զենքի արտադրությունն ու տեղաբաշխումը, ինչպես նաև նրա օգտագործումը հանդիսանում են հանցագործություն մարդկության դեմ, և որ այդպիսի գործունեությունը պետք է դատապարտվի ըստ բարոյական և աստվածաբանական հիմնավորումների:

Միջուկային զենքի խնդիրը իր էությամբ և մարդկության համար ներկայացրած իր ըստ սանդղակի հանդիսանում է քրիստոնեական կարգապահության և Ավետարանին հավատարիմ մնալու հարց:

Մենք հասկանում ենք, որ միջուկային զենքը չի վերանա Եկեղեցիների այդպիսի հայտարարությունների շնորհիվ, սակայն այդ հայտարարությունները պատճառ կհանդիսանան, որ Եկեղեցիները և նրանց անդամները հիմնովին ուսումնասիրեն իրենց սեփական բացահայտ կամ ոչ բացահայտ աջակցությունը այն քաղաքականությանը, որը բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով հիմնված է այդպիսի զենք ունենալու կամ այն օգտագործելու վրա»:

Մենք համառորեն կոչ ենք անում Եկեղեցիներին ապդեցություն գործադրել իրենց կառավարությունների վրա հատկապես այն երկրներում, որոնք ունեն կամ կարող են ունենալ միջուկային զենք, որպեսզի նրանք մշակեն և վավերացնեն միջազգային իրավական մի փաստաթուղթ, որը օրենքից դուրս կհռչակի միջուկային զենք ունենալը և այն օգտագործելը, որպես հանցագործություն մարդկության դեմ:

26. Այս հիման վրա և Եկեղեցիների 5-րդ համագումարի կոչի ոգով, որն ասում է՝ «Ընդգծել մեր պատրաստակամությունը ապրելու ոչ զենքի հովանու տակ», մենք գտնում ենք, որ քրիստոնյաները պետք է վկայեն, որ իրենք չեն ցանկանում մասնակցել որևէ ընդհարման, որտեղ կարող է օգտագործվել սանդղաձային ոչնչացման կամ սովորական գործողության զենք:

27. Մենք հայտարարում ենք այդ մասին հովվական պատասխանատվության խոր զգացումով: Ասրել համապատասխան այս համոզմունքների՝ դուրին խնդիր չէ բոլոր քրիստոնյաների և Եկեղեցիների համար, և մենք հասկանում ենք, որ այդպիսի դիրքորոշման հետևանքները ոմանց համար ան-

համեմատ ավելի լուրջ կլինեն, քան ուրիշների: Մենք հայտնում ենք այս համոզմունքը՝ չդատապարտելով և չդատելով ուրիշներին, բայց, խոստովանելով մեր սեփական թույությունը, կոչ ենք անում Եկեղեցիներին և քրիստոնյաներին՝ աջակցելու միմյանց սիրո մեջ, վասնզի այսպիսով մենք բոլորս ընդունում ենք մնալ հավատարիմ մեր ընդհանուր կոչմանը, այն է՝ հռչակել և ծառայել միակ Տեր Հիսուս Քրիստոսին՝ աշխարհը Կառավարողին, աշխարհի Կյանքին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԱՍԻՆ

1. Մերձավոր Արևելքում ավելի և ավելի վտանգավոր դարձող կացությունը սպառնում է ամբողջ աշխարհի խաղաղությանը և ծանր պահանջներ է դնում նրանց վրա, ովքեր պայքարում են արդարության և ապատության համար:

Մերձավոր Արևելքը հատուկ հետաքրքրություն ներկայացնող մի շրջան է՝ որպես երեք միաստվածության կրոնների ծնդավայր: Այդ շրջանի Եկեղեցիներն իրենց արմատներով գնում են մինչև առաքելական ժամանակները: Նրանց մշտական ներկայությունն ու ակտիվ մասնակցությունը ամբողջ շրջանի կյանքին, հակառակ տարբեր ժամանակաշրջաններում իրենց կրած տառապանքներին, հանդիսանում է հավատի ակնբախ վկայություն: Նրանք բախվում են նոր մարտահրավերների և փորձում են դրանց արձագանքել վկայության նոր ձևերով: Թեև միայն Մերձավոր Արևելքի Եկեղեցիները կարող են որոշել իրենց վկայության բնույթն ու ձևերը, սակայն բոլոր երկրների Եկեղեցիներին անհրաժեշտ է ուժեղացնել իրենց ներկայությունը և նեցուկ հանդիսանալ նրանց ծառայությանը, մասնավորապես հաշտության ծառայությանը և խաղաղության վկայությանը: Պատմական գործոնները և որոշակի աստվածաբանական մեկնությունների պակասը այդ շրջանից դուրս բնակվող քրիստոնյաներին հաճախ շփոթեցնում էին Մերձավոր Արևելքի կրոնական և քաղաքական իրադարձությունների զարգացման ճշգրիտ գնահատականը տալու մեջ:

2. Այդ շրջանում տեղի ունեցող վերջին իրադարձությունները է՛լ ավելի ետ մղեցին խաղաղություն հաստատելու հեռանկարը: Լիբանանյան պատերազմը դեռ չի ավարտվել: Լիբանանի ամբողջականությունն ու անկախությունը, ավելի քան երբևէ, գտնվում են մեծ վտանգի տակ: Հորդանան գետի արևմտյան ափին բնակավայրեր հիմնելու իսրայելական քաղաքականությունը փաստորեն հանգեցրեց բռնակցման՝ հանդիսանալով ժողովուրդների միջև խտրություն դնող մի քաղաքականության մի վերջին կաթիլը, որը լայիրջ կերպով ոտնահարում է պաղեստինյան ժողովրդի հիմնական իրավունքները: Երկյուղ կա արևմտյան ափի բնակիչներին տեղահանելու և արտաքսելու: Պաղեստինցիների մեծ մասը գտնվում է արևմտյան ափի բանտերում կամ Լիբանանի ճամբարներում: Լարվածության մեծացում կա բռնագրավված տարածքներում: Արաբական երկրների միջև, ըստ երևույթին, համաձայնություն չկա: Արտաքին և ներքին ճնշումը լուրջ ճեղքվածք է առաջացրել պաղեստինյան շարժման մեջ: Շատ դեպքերում ուժեղանում են մարդու իրավունքի խախտումները, հատկապես փոքրաստանությունների նկատմամբ, իսկ կրոնական մոլեռանդությունը շատ համայնքների գործունեության հիմքն է դարձել: Իրանա-իրաքյան պատերազմը շարունակում է ավելի ու ավելի կյանքեր խլել և բարդացնել միջարաբական հարաբերությունները: Լարվածությունը ուժեղանում է նաև Կիպրոսի կապակցությամբ:

3. ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ

Ա. Մենք ԵՀԽ-ի կողմից նախապես հայտարարված սկզբունքներն ընդունում ենք որպես հիմք, որի վրա կարելի է հասնել խաղաղ կարգավորման: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի № 242 բանաձևը և ՄԱԿ-ի մյուս բոլոր համապատասխան բանաձևերը պետք է վերանայվեն և կենսագործվեն 1967 թվականից ի վեր կատարված փոփոխությունների հաշվարկով, և այդ վերանայումը պետք է արտացոլի հետևյալ սկզբունքներն այնպես, որ ապահովվի՝

ա) Իսրայելական զորքերի հեռացումը 1967 թվականին բռնագրավված բոլոր հողերից:

բ) Բոլոր պետությունների, ներառյալ Իսրայելի և արաբական երկրների, խաղաղ ապրելու իրավունքը՝ ապահով և ճանաչված սահմաններում:

գ) Պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի կենսագործումը, ներառյալ պաղեստինյան անկախ պետություն ստեղծելու իրավունքը:

Բ. Մենք նորից հայտարարում ենք, որ մերձավորարևելյան կոնֆլիկտը չի կարող լուծվել կենքի գործադրումով, այլ միայն խա-

դաղ միջոցներով: Մերձավոր Արևելքում համընդհանուր կարգավորման հասնելու համար տեղի ունեցող բանակցություններին պետք է մասնակցեն բոլոր այն կողմերը, որոնք առավել սերտորեն են կապված այդ խնդրի հետ՝ Իսրայելի պետությունը, Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը և հարևան արաբական պետությունները:

Խաղաղության շահերը, ամբողջությամբ վերցրած, առավել լավ է ներկայացնում ՄԱԿ-ը, իսկ ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը հատուկ պատասխանատվություն ունեն այս հարցում:

Գ. Դեպի բանակցություններ տանող ընթացքին աջակցություն ցուցաբերելու նպատակով, Եկեղեցիները պետք է նախաձեռնեն հետևյալը.

ա) Նպաստել, որ Եկեղեցիներն ավելի լավ հասկանան Պաղեստինյան հարցի լուծման անհրաժեշտությունն ու նրա արդարացիությունը: Այս կապակցությամբ հարկավոր է նոանդուն օժանդակություն ցուցաբերել պաղեստինյան հարցի շուրջ Ժնևում 1983 թվականի օգոստոսին կայանալիք ՄԱԿ-ի կոնֆերանսին: Եկեղեցիները պետք է իրենց ազդեցությունն ի գործ դնեն իրենց կառավարությունների վրա, որպեսզի նրանք մասնակցեն այս կոնֆերանսին:

բ) Քաջալերել դիալոգը պաղեստինցիների և իսրայելցիների միջև՝ փոխըմբռնման և իրար ճանաչելու հնարավորություններ ստեղծելու նպատակով:

գ) Արևմտյան աշխարհի քրիստոնյաներին հիշեցնել, որ նրանք պետք է ընդունեն իրենց մեղքը հրեաների ճակատագրի հանդեպ այն իմաստով, որ իրենց երկրներում իրենց արտահայտած տնտեսական ազդում են Մերձավոր Արևելքի կոնֆլիկտին, մի հանգամանք, որը հաճախ հանգեցնում է Իսրայելի պետության քաղաքականությունը անքննադատաբար պաշտպանելուն՝ այսպիսով արհամարհելով պաղեստինյան ժողովրդի վիճակն ու իրավունքները:

Այս կոնտեքստում մենք ողջունում ենք քրիստոնեական Եկեղեցիների որդեգրած ավելի բացահայտ ու քննադատական կեցվածքը հրեաների և մահմեդականների ավանդական դիալոգի նկատմամբ, բայց նաև կոչ ենք անում ընդլայնելու դիալոգը՝ ներգրավելով թե՛ քրիստոնեական և թե՛ հրեական հասնդնքների ավելի մեծ հատվածներ:

դ) Նեցուկ հանդիսանալ Իսրայելի ներքին շարժումներին, որոնք գործում են հանուն խաղաղության և արդարության:

4. ԼԻԲԱՆԱՆ

Էկումենիկ հասնդնքը պտում է լիբանանյան ժողովրդի ողբերգությունը, որը ավելի քան ինը տարիներից ի վեր ճաշակում է անդուլ տառապանքներ և իր վրա կրում այդ շրջանի խնդիրների ծանր բեռը:

Մենք նորից հաստատում ենք, որ Լիբանանի տերիտորիալ ամբողջականության և անկախության վերականգնումը վճռական գործոն է հանդիսանում այդ շրջանի խաղաղության և արդարության համար, և որ դրա իրագործման համար պետք է բոլոր արտաքսահանման ուժերը դուրս գան Լիբանանի տարածքից:

Մենք կոչ ենք անում Էկումենիկ հանագործակցությանը՝

ա) Սատարել Լիբանանի կառավարության ջանքերին Լիբանանի ամբողջ տարածքի վրա իշխանության արդյունավետ վերականգնման համար, և բոլոր լիբանանցիներին կոչ անել հանախմբվելու:

բ) Շարունակել ավելորդն օժանդակել Մերձավոր Արևելքի Եկեղեցիների խորհրդին և Լիբանանում գտնվող Եկեղեցիներին՝ Լիբանանում բոլորին օգնություն ցուցաբերելու նպատակ մարդասիրական և սոցիալական ծրագրերի իրականացման համար:

գ) Օգնել Լիբանանում գտնվող Եկեղեցիներին և երկրի բոլոր հասնդնքների նեղությունների և տիառնության դարատակով հաշտվելու փորձերին:

դ) Համագործակցել այս շրջանի Եկեղեցիների հետ՝ Լիբանանում բոլորի համար արդարության, արժանապատվության, ազատության և մարդու իրավունքների ապահովման նպատակով:

5. ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ա. Մենք հաստատում ենք, որ «Երուսաղեմը հանդիսանում է Սուրբ Քաղաք երեք միաստվածության կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության և մահմեդականության համար: Հարկավոր է խուսափել այս երեք կրոնների համար Երուսաղեմի նշանակության նվազեցման միտումից» [Ե համագումար, Նայրոբի, 1975 թ.]: ԵՀԽ-ն և ԵՄԱԽ-ն պետք է կենսագործեն ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեի առաջարկը (օգոստոս 1980 թ.) այն մասին, որ հարկավոր է դիալոգներ սկսել հրեաների և մահմեդականների հետ, որպեսզի երեք կրոնների ներկայացուցիչները կարողանան հասկանալ յուրաքանչյուրի կրոնական խոր կապվածությունը Երուսաղեմին, և որպեսզի համագործակցելով՝ կարողանան իրենց նպաստը բերել քաղաքական պրոցեսին, որը կհանգեցնի փոխադարձաբար ընդունելի համաձայնության՝

քաղաքը բաժանելու համար: Եկեղեցիները պետք է նախապատվություն տան դրան՝ շարունակելով բոլոր ջանքերը Մերձավոր Արևելքի կոնֆլիկտի ընդհանուր կարգավորման համար:

Բ.—ա) Մենք Եկեղեցիների ուշադրությունը հրավիրում ենք հետևյալ անհրաժեշտությունների վրա.

Գործողություններ, որոնք կապահովեին Երուսաղեմում բնիկ քրիստոնեության մշտական ներկայությունը և վկայությունը.

Արևելյան Երուսաղեմում և բռնագրավված այլ տարածքներում բռնատիրական ուժերի պատժիչ գործողություններից տառապող տեղական, մահմեդական և քրիստոնեական համայնքների դրության ավելի լայն էկումենիկ հասկացողություն:

բ) Մենք կոչ ենք անում բոլոր Եկեղեցիներին իրենց ընդհանուր մտահոգությունն արտահայտել այն բանի համար, որ, թեև իսրայելյան օրենսդրությունը բոլոր կրոնների անդամների համար երաշխավորում է Երուսաղեմում ավանդություններով արմատավորված իրենց սուրբ վայրերն այցելելու ապատ ուուտք, սակայն Իսրայելի և արաբական երկրների միջև պատերազմական իրավիճակը, Իսրայելի կողմից Արևմտյան Երուսաղեմի բռնակցման և Հորդանանի արևմտյան ափի շարունակվող բռնագրավման հետևանքով ստեղծված քաղաքական իրադրությունը պատճառ են դառնում, որ արաբ մահմեդականները և քրիստոնյաները շարունակ կրեն լուրջ դժվարություններ, և հաճախ նրանց արգելվի Սուրբ քաղաքն այցելել:

6. Մեր աղոթքներում մենք հիշում ենք Մերձավոր Արևելքի Եկեղեցիներին, որոնք բարդ իրադրություններում, Քրիստոսին ծառայելու իրենց վկայությամբ, լուծում են նոր խնդիրներ:

Մենք՝ այստեղ հավաքվածներս, հանուն Հիսուս Քրիստոսի, որ կյանքն է աշխարհի, հավաստիացնում ենք նրանց ամբողջ աշխարհի հավատքի համագործակցության մասին, համերաշխության մեջ:

Մենք աղոթում ենք այս շրջանի ալգերին պատճառված վերքերի ապաքինման համար:

Մյուս կրոնական համայնքների հետ միասին, մենք ձգտում ենք հավատարիմ լինել խաղաղարարի մեր ընդհանուր կոչմանը ծառայելու ոգուն՝ բոլորին հաշտեցնելու և հույս ներշնչելու համար:

ԲԱՆԱՁԵՎ ԿԻՊՐՈՍԻ ՄԱՍԻՆ

Վեցերորդ համագումարը կրկին վերադառնում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայտարարություններին և որոշումներին, որոնք ընդունվել են 1974 թվականին թուրքական բանակի ներխուժման հետևանքով ստեղծված Կիպրոսի դրության վերաբերյալ:

Համագումարը լրջորեն անհանգստացած է Կիպրոսի հարցի խաղաղ ու արդարացի լուծման խնդրում առաջադիմության բացակայությունից:

Համագումարը վերստին հաստատում է ԵՀԽ-ի կողմից նախապես արտահայտված հետևյալ կոչերը.

ա) ՄԱԿ-ի կողմից Կիպրոսի վերաբերյալ ընդունված բոլոր բանաձևերի անհապաղ իրագործում.

բ) Կիպրոսի հունական և թուրքական համայնքների ներկայացուցիչների միջև, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հովանավորությամբ, բովանդակալից և հիմնակազմիչ բանակցությունների անհապաղ վերականգնում և դրանց ապատ անցկացում հավասարության հիմքի վրա, երկու համայնքների հիմնական և օրինական իրավունքների շուրջ փոխադարձաբար ընդունելի համաձայնության հասնելու նպատակով:

գ) Կրոնական և սուրբ վայրերի հանդեպ պատշաճ հարգանք:

Համագումարը ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարին և ԵՀԽ-ին առընթեր Եկեղեցիների միջազգային գործերի հանձնաժողովին խընդրում է շարունակել անհայտ կորած կիպրոսցիների հարցի ուսումնասիրությունը՝ համագործակցելով հատկապես Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի անդամ Եկեղեցիների և համապատասխան միջպետական և միջազգային կազմակերպությունների հետ: